

ՀԱՅՈՅ ԳԻՐԸ ՄՈՇՏՈՑԻՅ ՇԱՏ ԱՌԱՋ

Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ինչպես աշխարհի շատ ժողովուրդների, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի բնիկների մոտ գրությունն ունեցել է իր զարգացման պատմությունը:

Գրության ամենասկզբնական տեսակը պատկերագիրն է, որի ստեղծման և ձևավորման հիմքում ընկած է նախնադարյան արվեստը:

Պատկերագրի վերջնական ձևավորումը, ինչպես ցույց են տալիս հնագիտական և մարդաբանական ուսումնասիրությունները, հավանաբար վերաբերում է նեոլիթի (նոր քարե դար) ժամանակաշրջանին (8—4-րդ հազարամյակներ մ. թ. ա.):

Պատկերագրի ամեն մի տարրն իրենից ներկայացնում է մի բարդ պատկեր կամ պատկերների մի խումբ, որը հաղորդում է ինչ-որ ամբողջական միտք: Պատկերագրի առանձնահատկությունն այն է, որ պատկերներն արտահայտվում են սովորական, ավելի սխեմատիկ ու պայմանական ձևով և հիմնական խնդիրը ոչ թե գեղարվեստական կերպարի ստեղծումն է, այլ պատկերի ըմբռնման ապահովումը:

Հայաստանում, հատկապես բարձրագույն լեռնային շրջաններում (Արագածի, Աղմալանի լեռներ, Սևանա լճի ավազան) մինչև այժմ էլ ժայռերի վրա պահպանվել են բազմաթիվ պատկերներ, որոնք հանդիսանում են նախնադարյան արվեստի լավագույն նմուշները:

Սակայն ժայռերի վրա փորագրված մարդկային, կենդանական այդ պատկերները դեռևս հավաքված և ուսումնասիրված չեն:

1961 թ. ամռանը էջմիածնի շրջանի Ջելվա գյուղի մոտ գտնվող Ղզըլ-Թափա կոչվող բլրի վրա հնագիտական հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերված հուշարձանների մեջ իրենցից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բլրի զազաթին և հարավ-արևմտյան ծայրում գտնվող ժայռի վրա փորագրված պատկերները:

Ղզըլ-Թափայի կենտրոնական մասում, հրբաթից առաջացած 10 մետրանոց տուֆի զանգվածի վրա, ձգվում է ժայռապատկերների մի շարք՝ բաղկացած երկրաչափական պատկերներից (քառակուսի, բուրբակ, կիսաշրջան փոսիկներից, նկ. 1):

Ժայռագրությունների հիմնական խմբի տակ փորագրված է արաբական մի արձանագրություն, որն անշուշտ հետագա դարերի ծնունդ

է: Փորագրված պատկերների մեջ պետք է որոնել արևի կամ ջրի պաշտամունքի հետ կապված ծիսային սովորույթների արտահայտումը:

Պատկերագրերի շատ նմուշներ պահպանվել են նաև ուրարտական կնիքների, կավամանեների (ինչպես և միջնադարյան) հատակների վրա:

Պատկերագիրը իր զարգացման ընթացքում սկսում է ավելի կոնկրետանալ և վերածվել առանձին, արդեն որոշակի բառային նշանների, երբ գրության մեջ ուշադրություն է դարձվում ոչ թե նշանների ձևին, այլ նրանց նշանակությանն ու իմաստին: Գրության այս տեսակը գիտության մեջ ընդունված է անվանել իդեոգրաֆիկ (գաղափարագիր), լոգոգրաֆիկ կամ հիերոգլիֆ գիր: Պատկերագրի հետ համեմատած հիերոգլիֆ կամ լոգոգրաֆիկ գիրը ավելի ճշգրիտ արտացոլում էին լեզուն, նրա հնչյունային և շարահյուսական առանձին կողմերը:

Հիերոգլիֆ գիրը հիմնականում բաժանվում է երկու խմբի: Առաջին խումբը դա բուն գաղափարագիրն է, իսկ մյուսը՝ հնչյունային հիերոգլիֆների գիրը: Երկու դեպքում էլ գրության այս տեսակը միասին է հանդես գալիս:

Հայաստանում հիերոգլիֆն ապրել է զարգացման երկու ժամանակաշրջան: Առաջին ժամանակաշրջանի նմուշներին մենք հանդիպում ենք ուրարտական նյութական կուլտուրայի մրցանցորդների վրա, իսկ երկրորդ ժամանակաշրջանը, որտեղ անկասկած պահպանվել էին ուրարտական, գուցե և խեթական հիերոգլիֆ գրի տրադիցիաները, համապատասխանում է արդեն մ. թ. 14—17-րդ դդ.:

Մենք այստեղ կանդրադառնանք հիերոգլիֆ գրի զարգացման միայն առաջին ժամանակաշրջանի պատմությանը 9—7 դդ. մ. թ. ա.:

Ուրարտական ցեղերի նյութական կուլտուրայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վանի թագավորությունում մ. թ. ա. 9-րդ դարի վերջին քառորդում, ասորա-բաբելական գրի անմիջական ազդեցության տակ առաջացած սեպագրի հետ միասին (ինչպես և նրանից առաջ) գոյություն է ունեցել նաև հիերոգլիֆ գիրը (նկ. 2):

Ուրարտական հիերոգլիֆներ առաջին անգամ հայտնաբերվել են Թուփրախ Կալեի (Վան) պեղումների ժամանակ: Այստեղ հիերոգլիֆները մեծ մասամբ հանդիպում են կավե, բրոն-



Նկ. 1. Ղզըլ-բափայի ժայռապատկերները:

զն ամանների, կարասների վրա և հանդես են գալիս ուղիղ, թեք, ալիքաձև գծերի, պարույրների և պատկերների ձևով:

Դեռևս 1907 թ. լեհման-Հաուպտը գտնում էր, որ ուրարտական հիերոգլիֆները պետք է համարել խեթական թագավորությունից և Կնոսեից ներմուծված գրեր, որից օգտվում էին միմիայն ուրարտացիների մոտ գտնվող գերիները:

Քննության առնելով Անդրկովկասի ժայռագրությունները, առանձին պատկերագրերն ու այսպես կոչված բազմաթիվ «խորհրդավոր» նշաններն ու գրերը, ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինովը իրավացիորեն նկատել է, որ մինչև 9-րդ դարը (մ. թ. ա.), մինչև սեպագրերի օգտագործումը ուրարտացիներն ունեցել են հիերոգլիֆ գիր: Քննադատելով լեհման-Հաուպտի ուրարտական հիերոգլիֆ գրի գոյության ժրխտուման տեսությունը, նա միաժամանակ նկատում է, որ ուրարտական հիերոգլիֆ գիրը տեղական երևույթ է և այն չպետք է համարվի արևմուտքից ներմուծված:

Ուրարտական հիերոգլիֆների մասին լավագույն վկայությունները տվեցին Կարմիր-բլուրի (Թեյշեբաինի) և Ալիթին-Թեփեյի (Երզնկա) պեղումները, որտեղից հայտնաբերված նյութերը մեկ անգամ ևս հաստատում են ուրարտական ինքնուրույն տեղական հիերոգլիֆ գրի գոյությունը:

Կարմիր-բլուրում հիերոգլիֆներ հանդիպում են կավամանների, բրոնզե թասերի և կնիքների

վրա: Այսպես, օրինակ, հայտնաբերված 152 խոշոր կարասներից 106-ի վրա նրանց տարողությունը բացի սեպագրերից, նշված է նաև հիերոգլիֆներով:

Վանի թագավորությունում տնտեսական, նշվիրատական բնույթի արձանագրությունները հիերոգլիֆ գրերով էին կազմվում, որոնք մակայն լայն տարածում չունեին:

Նախամեսրոպյան ժամանակաշրջանում ուրարտական հիերոգլիֆ գրից բացի գրության այլ, նման տեսակի գոյության մասին հնագիտական տվյալներ չկան:

Հիերոգլիֆ գրի հիմնական թերությունը նրա բարդությունն է՝ նշանների բազմազանությունը և բառերի քերականական ձևերի զգալի հազորդումը:

Գրության այդպիսի բարդ տեսակը հասարակության զարգացման տարբեր աստիճաններում օրինաչափորեն վերածվում է զաղափարավանկային և զաղափարա-հնչյունային գրի: Վանկագրությունը մեծ ճշտությամբ արտացոլում է գրության լեզուն և նրա հնչյունաբանությունը: Գրության այս տեսակը հանդես է գալիս հիմնականում նշանների երկու իմաստավորումով: Առաջին դեպքում նշանները արտահայտում են ամբողջական բառեր, երկրորդ դեպքում՝ առանձին ձայնավորներ կամ վանկեր:

Հայկական լեռնաշխարհում վանկա-հնչյունային գրի լավագույն օրինակներ կարող են ծառայել ուրարտական սեպագրերը, որոնց թիվը 400-ից անցնում է: Ուրարտական վանկա-

և նրանց վրա հատվող քառակուսիների պատկերներին (նկ. 4)։


Առաջին անգամ այս արձանագրությունը հրապարակել է Ա. Քալանթարը, որն այդ նշանները իրավամբ դիտել է որպես գրության նշաններ։ Արձանագրությունը գրավում է քարի միայն մի անկյունը։ Նշաններն ունեն 2,75 մ երկարություն, 1,75 մ լայնություն և 1,30 մ բարձրություն, նշանների ուղղությունը, ինչպես և նրանց չափերը՝ տարբեր են։

Ներկայումս դժվար է այս արձանագրության վերծանման համար որոշակի ուղիներ գտնել և հաջողության հասնել։

Սակայն այս անգամ ևս, ուրարտական սեպագիր աղբյուրների միջոցով կարելի է արձանագրության թվագրման հարցի հետ կապված մի քանի դիտողություններ անել։

Ինչպես վկայում են ուրարտական աղբյուրները, մ. թ. ա. 8-րդ դարում Արմավիրի տեղում, որը գտնվում էր Ազա երկրում, հիմնադրվում է Արգիշտի-եինիլի քաղաքը, որտեղ բոլոր ուրարտական թագավոր Արգիշտի I-ի (Մենուայի որդին, 786—764 թթ. մ. թ. ա.) արձանագրության, բնակություն չկար։

Ամենայն հավանականությամբ գրության այս տեսակը գործածվում էր Արարատյան դաշ-



Նկ. 4. Արմավիրում հայտնաբերված արձանագրությունը։

տավայրում բնակվող ցեղերի (գուցե և ազանների) կողմից դեռևս մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերին։

Նման գրի այլ օրինակների գոյությունը հայ հնագիտությանը դեռևս հայտնի չէ։

Վերահիշյալ արձանագրությունների վերծանումը պահանջում է երկարատև և համառ աշխատանք ու գրության նման տեսակների բազմակողմանի ուսումնասիրություն։

❶ ՓՈՐՐԻԿ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

× Պարկետն ու լինդեումը չիչացնելու համար արձողի ոտներին փայտի ստանձով կպցրեմ փափուկ գործվածք (բայկա, ֆետր)։

× Բանկայի բերանը շպագատով կապելիս, վերջինս նախօրոք քրջեմ։ Չորանալուց հետո այն կծգվի, և կապը ամուր կլինի։

× Սուրճի մուրով ոչ միայն գուշակություն կարելի է անել այլև մաքրել յուղոտ շիշը։ Դրա համար մի քանի զգալ տաք մուր լցրեմ շիշ մեջ, ավելացրեմ ջուր և խառնեմ։

× Ինչպես անջատել իրար կպած բաժակները։ Դրսի բաժակը ընկղմեմ տաք ջրի մեջ, իսկ ներսինի մեջ լցրեմ սառը ջուր։ Ապա դրանցից ամեն մեկը պտրտեմ մի ուղղությամբ, և բաժակները հեշտությամբ կանջատվեն միմյանցից։

× Երաժշտական գործիքների ստեղները, երբ նրանք փողոսկրից են կամ պլաստմասսայից, ապա ժամանակի ընթացքում դեղնում են։ Նախկին սպիտակ գույնը վերականգնելու համար սրբեմ դրանք ջրածնի պեռօսիդով, իսկ հետո՝ սպիրտի լուծույթով։